

ՀՏԴ 159.9

ՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
DOI 10.54151/27382559-2022.2b-70

**«ՈՒՆԵՆԱ՞Ն, ԹԵ՞ ԼԻՆԵԼ» ՄԿԶԲՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ
Թաղևոսյան Ա. Ե.**

Մույն հոդվածում ներկայացրել ենք օբյեկտիվ իրականության և հարաբերությունների կառուցման առանձնահատկությունները, մասնավորապես՝ ինքնիրացման խնդիրը՝ հիմք ընդունելով Է. Ֆրոմի «Ունենա՞ն, թե՞ լինել սկզբունքը», քանի որ դա է հենց հետագա մասնագիտական գործունեության պատկերի ձևավորման հիմքը:

Բանալի բառեր. համավարակ, առցանց ուսուցում, ուսումնական մոտիվացիա, մանիպուլյատիվ վարք, ինքնիրականացում:

Ամբողջ աշխարհի առջև մարտահրավեր նետած համավարակը մարդկության և նրա՝ ապագայում գոյություն ունենալու հարցը, նրա շուրջ ծավալվող ուսումնասիրություններն ու քննարկումները ձեռք բերեցին ավելի մեծ հետաքրքրություն և արդիականություն: Համավարակի ճգնաժամը միանգամորեն փոխեց մեզ սովոր աշխարհը և համաաշխարհային հեռանկարները: Այն նաև հուշեց, թե ինչպես փոփոխել կրթությունը՝ մարդկանց ապագային ավելի լավ պատրաստելու համար:

Հիրավի, կրթական համակարգում եղան զգալի ցնցումներ, մասնավորապես, ստիպված եղանք հրաժարվել հին ու ավանդական դասավանդման մոդելից, սոցիալ-հոգեբանական հարաբերություններ հաստատելուց: Ստեղծված խնդրահարույց իրավիճակն էլ դրդեց հնարավորինս արագ իրականացնել առցանց կրթություն, չնայած որ համավարակի բռնկումից առաջ էլ արդեն իսկ նկատելի էր հետաքրքրության և ներդրումների մեծ աճ դեպի կրթական թվային և առցանց տեխնոլոգիաներ:

Համավարակի ազդեցությունը կրթական համակարգի վրա կարելի է գնահատել երկու ցուցանիշով՝ բովանդակային և տեխնոլոգիական:

Մասնավորապես, կրթության կազմակերպիչները գտան ժամանակ ուրորտի նպատակային առաջնահերթությունները վերաարժևորելու համար՝ առաջարկելով կրթություն ինտեգրված աշխարհի պայմաններում: Հաջորդ տասնամյակների հաջողակ մարդիկ պետք է կարողանան հասկանալ ինտեգրված հարաբերությունների բնույթը և ընդունակ լինեն աշխատել համընդհանուր համագործակցության մեջ:

Գործընթացի թվայնացմամբ փոխվեց, վերաիմաստավորվեց դասավանդողի առաքելությունը: Սովորողներն այլևս հնարավորություն ունեն ստանալ գիտելիքներ իրենց թվային տեխնոլոգիաներով, ինչը ստիպում է վերանայել դասավանդողի դերն ու գործառույթները: 21-րդ դարի կրթության նպատակների համատեքստում դասավանդողի դերն այլևս միայն գիտելիքակողմնորոշված չի կարող լինել: Ըստ այդմ՝ այն կարող է ուղղված լինել ուսումնական գործընթացի շարժիչ ուժերի՝ մոտիվացիաների, պահանջմունքների ու հետաքրքրությունների և այլ նախադրյալների ակտիվ գործարկմանը: Քանի որ փոփոխվող ինտեգրված միջավայրում երիտասարդներին անհրաժեշտ է ձկունություն և հարմարվողականություն, ապագայի կանխատեսումով պահանջարկված կոմպետենցիաներ, որոնք են՝ ստեղծագործակա- նությունը, հաղորդակցականությունը, համագործակցությունը, կարեկ- ցանքը, հուզական ինտելեկտը, թիմային աշխատանքը և այլն:

Ահա այս համատեքստում էլ փորձել ենք ներկայացնել, թե ուսումնական գործընթացի առցանց կազմակերպման պայմաններում ուսանողների մոտ ինչպես դրսևորվեցին ուսումնական մոտիվացիաները, արժեհամակարգի վերաձևավորման միտումները, քանի որ դրանք հենց հիմքն են հետագա մասնագիտական գործունեության պատկերի ձևավորման համար, մյուս կողմից էլ համարվում են անձնային ինքնորոշման, ինքնիրացման կարևորագույն բաղադրիչները: Ա. Մալոուն իրավացիորեն պնդում է, որ անձի ինքնիրականացման գործընթացը կապված է ոչ թե տարաբնույթ խնդիրների բացակայության հետ, այլ դրանց լուծման ուղիները և միջոցներն արդյունավետ գտնելու կարողության հետ [1, 54-55]:

Հումանիստական հոգեբանության մեջ գոյություն ունի մանիպուլ- յատիվ վարքին հակոտնյա՝ դրական պոտենցիալի հասկացությունը, որն Աբրահամ Մալոուն անվանեց «ինքնիրականացում»: Ա. Մալոուն ինքնիրականացումը բնորոշում է որպես «տաղանդների, ընդունակու- յունների, հնարավորությունների լիարժեք օգտագործում»: «Ես, - գրում է Ա. Մալոուն, - պատկերացնում եմ ինքնիրականացվող մարդուն ոչ

որպես սովորական մարդ, որից ոչինչ չի հանված, խլված, վերցված: Միջակ մարդու մոտ ճնշված ու շրջափակված են ընդունակությունները և տաղանդը, որոնք ամբողջության մեջ կարող էին կազմել նրա լիարժեքությունը, ամբողջականությունը» [2]:

Ինքնիրականացվող անձն ազատ է արարելու իրեն, իր կյանքը, ամենատաղտկալի գործունեությունը դարձնել հրապուրիչ ու հետաքրքիր: Ինքնիրականացման առաջին քայլը սեփական մանիպուլյատիվ վարքի գիտակցումն է, որն ի ծնե չի լինում, այլ ձեռք է բերվում հասարակական կյանքի և, մասնավորապես, մասնագիտական գործունեության արդյունքում:

Մանիպուլյատիվ վարքի համար պատճառ կարող է լինել դժվար իրավիճակում հայտնվելու վախը: Ցանկացած մարդ, զգուշանալով ընկնել դժվար իրավիճակի մեջ, նախընտրում է վճռական գործողություններ չձեռնարկել, ռիսկի չգնալ, փորձարկումներ չանել, այլ գնալ ստուգված, փորձված, «անվտանգ» ճանապարհով:

Չ. Բուժենտալն այն կարծիքն է հայտնել, որ ինքնիրականացման համար կարևորագույն պայման է, որ «մարդը չափից ավելի ջանքեր չգործադրի, կաշվից դուրս չգա»: Ինքնիրականացվող անձի համար բնորոշ է հավատն ինքն իր նկատմամբ, իր «Ես»-ի նկատմամբ, սեփական կարողությունների և արարքների սթափ ինքնագնահատականը:

Մանիպուլյատիվ վարքի մի էական բացատրության կարելի է հանդիպել Ա. Էլիսի մոտ: Նա առանձնացնում է որոշ անտրամաբանական բացթողումներ, որոնք մարդն օգտագործում է կյանքում: Դրանցից է մարդու՝ բոլորից և յուրաքանչյուրից խրախուսանք ստանալու կարիքը: Սակայն ակնհայտ է, որ երբեք հայացքների ու դիրքորոշումների բացարձակ միասնականություն չի կարող լինել բոլորի հետ, հետևաբար նաև չի կարող լինել համընդհանուր քաջալերանք և խրախուսանք [4, 103-104]:

Ինքնիրականացվող անձը բնույթով կրոնական անձ է՝ ըստ Է. Շոստրոմի: Ինքնիրականացման և հուզական առողջության գլխավոր ճանապարհը ինքնագիտակցումն է, այդ թվում նաև սեփական մանիպուլյացիաների գիտակցումը, սեփական էության և իր կոչման գիտակցումը [3, 82]: Սյդուհանդերձ, պետք է նշենք, որ ուսանողների մոտ հրատապ խնդիր պետք է լինի արժեհամակարգի վերախմաստավորումը, դրդապատճառային ոլորտի մշտադիտարկումը և համապատասխան վերլուծությունը:

Ժամանակակից մարդն իր անվերջ մանիպուլյացիաների արդյունքում կորցրել է ամեն մի հնարավորություն՝ ինքնարտահայտվելու ուղղակի և ստեղծագործաբար, նա վերածվել է մի հոգսաշատ ավտոմատի, որն իր ամբողջ ժամանակը ծախսում է անցյալը պահպանելու և ապագան ապահովագրելու վրա:

Մարդկային բազային պահանջմունքների շարքում Ա. Մալոուն առանձնացնում է անձնային աճի, զարգացման, սեփական հնարավորություններն օգտագործելու, այսինքն՝ ինքնիրականացման պահանջմունքը: Միննույն ժամանակ նկատում ենք, որ չնայած մարդը՝ որպես կենսաբանական էակ, ունի աճի ուղղվածություն, մարդկանց մեծամասնությունն ընդունակ չէ բացահայտելու իր պոտենցիալ հնարավորությունները:

Մեր կարծիքով՝ այս հակասության պատասխանը կարելի է գտնել Է. Ֆրոմի «Ունենա՛լ, թե՛ լինել» հարցադրման մեջ:

Գաղտնիք չէ այն, որ մարդկության գոյության և կենսական պահանջմունքների բավարարման համար ամենաբնական և նույնիսկ միակ ընդունելի միջոցը համարվում է «ունենալը»: Ներկայիս հասարակությունում մարդկանց մեծամասնությունը հակված է սահմանել ինքն իրեն՝ ելնելով այն ամենից, ինչ ինքն ունի: Եվ երբ աշխարհի հետ փոխհարաբերությունների հիմնական միջոց հանդիսանում է «ունենալը», մարդու մտիվացիան հիմնականում կազմում են բազային պահանջմունքները: Մարդն այնքան է համակվում «ունենալու» ձգտմամբ, որ տիրապետման առարկաների և օբյեկտների ձեռքբերման տենդը արտամղում է սեփական «ես-ի» բացահայտման պահանջմունքը [5]:

Այն ուսանողները, ովքեր հակված են մտածել ու գործել «ունենալ» սկզբունքով, կարող են լսել դասախոսությունը, հասկանալ տրամաբանական միտքը, մտապահել բառեր ու արտահայտություններ, որպեսզի հետագայում կարողանան հանձնել քննությունը: Մակայն ակնհայտ է, որ այս դեպքում դասախոսության ողջ բովանդակությունը տեղ չի գտնում ուսանողի մտածողության մեջ, այսինքն՝ դասախոսության բովանդակության և ուսանողի միջև ոչ մի կապ էլ չի ստեղծվում:

Բոլորովին այլ կերպ է ընթանում գիտելիքների յուրացման գործընթացը այն ուսանողների համար, ովքեր գտնում են, որ օբյեկտիվ իրականության և հարաբերությունների կառուցման հիմքում ընկած է «լինել» սկզբունքը: Նման մտածողությամբ ուսանողների համար դասախոսությունն իրենից ներկայացնում է ակտիվ գործընթաց, որի

ընթացքում ձեռք են բերում գիտելիքներ, որոնք չեն տանում ուղղակի տուն: «Լինել» սկզբունքի հիմնական բնութագիրն ակտիվությունն է, ոչ թե արտաքին ակտիվությունը՝ զբաղվածությունը, այլ ներքինը, որը նշանակում է սեփական մարդկային հնարավորությունների արդյունավետ օգտագործում: Օրինակ՝ «Ես ունեմ գիտելիք» և «Ես գիտեմ» ձևակերպումներն էլ ինքնին հուշում են, որ վերջինը իր կիրառությունն է գտնում անձի մտածողության մեջ: Հետևաբար, «լինել» նշանակում է ինքնիրականացվել:

Այնուամենայնիվ, մարդկանց կենսակերպի մեջ այս երկու հասկացությունների հիմքերն էլ միաժամանակ առկա են: Ոչ մեկը և ոչ էլ մյուսը միմյանցից անջատ չենք կարող դիտարկել, դրանք երկուսն էլ իրենց արտացոլումներն ունեն մեր առօրյա կյանքում և պահանջում են հստակ դիտարկում և վերլուծություն, և որ դրանցից մեկի գերակշռումը որոշում է մարդկանց անհատական առանձնահատկությունների բնույթը:

Մասնագիտական գործունեության մեջ իր պոտենցիալ հնարավորությունների և պահանջունքների ըմբռնման, հասկացման վրա հիմնված ինքնիրականացումը, կարծում ենք, առավել քան անհրաժեշտ է:

Տարաբնույթ փոփոխությունների նկատմամբ դիմադրության գիտակցումը ուսանողին դարձնում է առավել ազատ և արդյունավետ ինչպես կյանքում, այնպես էլ մասնագիտական, աշխատանքային գործունեության մեջ:

ПРИНЦИП «ИМЕТЬ ИЛИ БЫТЬ» КАК УСЛОВИЕ ПОВЫШЕНИЯ УЧЕБНОЙ МОТИВАЦИИ

Тадевосян А. Е.

В этой статье мы представили особенности построения отношений объективной реальности, в частности, проблему самореализации, исходя из принципа Э. Фромма «Иметь или Быть», поскольку это основа для формирования имиджа дальнейшей профессиональной деятельности.

Ключевые слова: пандемия, онлайн-обучение, учебная мотивация, манипулятивное поведение, самореализация.

THE PRINCIPLE “TO HAVE OR TO BE” AS A PRECONDITION FOR INCREASING EDUCATIONAL MOTIVATION

Tadevosyan A. E.

The focus of the given article is to present the peculiarities of building an objective reality and relationship, where the pivotal problem is self-realization in particular, which in its turn is based on E. Fromm's principle “To have or “to Be”. It is noteworthy to mention that the very principle serves as the core image of further professional activity.

Keywords: pandemic, online learning, learning motivation, manipulative behavior, self-realization.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Маслоу А. Мотивация и личность. 3-е изд. СПб.: Питер. 2019. 400 с.
2. Маслоу А. Новые рубежи человеческой природы / Пер. с англ. М.: Смысл. 1999. 425 с.
3. Шостром Э. Человек манипулятор. Апрель-пресс. М.: Издательство Института психотерапии. 2004. 82 с.
4. Эллис А. Гуманистическая психотерапия: Рационально-эмоциональный подход /Пер. с англ. – СПб.: Изд-во ЭКСМО- Пресс. 2002. С. 103-104.
5. Fromm E. "To Have or to Be". (Перевод с английского Войскунской Н., Каменкович И., Комаровой Е.) М., Изд. АСТ. 2000. 224 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Թարևոսյան Ա. Ե. – հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ ararmin@yandex.ru

Տրվել է խմբագրություն՝ 27.09.2021
Գրախոսվել է՝ 22.11.2021